



2  
**Ուժեղ փոթորիկ Ավստրալիայի հարավում**



5  
**Տոռնադոների առեղծվածը**



6  
**Տարերային աղետներ**



7  
**... Զոկոնդայի «Ենթադրյալ» մասունքները**



ով իրագրված է, նա լուրջորեն վաճառված է

# Արտակարգ թերթ

N 19 (388)

27.5.2011 - 2.6.2011

www.emergency.am

## Մայիսի 28. Սարդարապատ. Առաջին Հանրապետություն



Մայիսի 28-ը Հայաստանի առաջին հանրապետության օրն է. 1918 թվականի մայիսի 26-ին Սարդարապատում հաղթելով թուրքական բանակին՝ հայկական զորքերը կարողացան կասեցնել թուրքերի ներխուժումն անդրկովկաս եւ փրկել Հայաստանը լիակատար ոչնչացումից: Իսկ 28-ին արդեն հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը:

Պատմական փաստեր են, որոնց մեջ որոնելի է վերապատմական խորհուրդը:

Պատմության տրամաբանություն, որը պարտադրող է, անբեկանելի, որպես այդպիսին, բայց միշտ ու դրանից վեր էլ պիտի կարողանա իրավունքներիդ տերը լինել: Ընդամենը:

Որովհետեւ իրապես ապրելին ու վերապրելին հենց խորհուրդն է: Ամեն ազգ իր ճակատամարտերն ունի՝ ասում է պատմության տրամաբանությունը: Այդ ճակատամարտերում պիտի կարողանա ամփոփել եւ հոգեւոր, եւ աշխարհիկ կարողությունները. սա էլ մեկ այլ տրամաբանություն ու պարտադրանք է, որ ճակատամարտերը վերածում է Սարդարապատի:

Թուրքերն ուզում էին ներխուժել... Հայերը փրկեցին Հայաստանը: Այս ամենին ոչ միայն նախորդում, այլև հաջորդում են պատճառներ ու հետևանքներ, հաջորդում է նույն Պատմության տրամաբանությունը:

Պատմության մեջ ենք նախենառաջ: Պատմության մեջ շարունակվելու համար հայերը պետականություն վերածնեցին Սարդարապատը դարձնելով վերապատմական խորհրդամիջ:

Մնացյալը ներկան է իրականում ու շոշափելին, հույսերի ու խորհրդամիջերի սառնասիրտ փորձարկողը:

Մեր այսօրը, արդեն իր պարտադրանքով՝ Հայոց պետականության վերածնունդը Ջանք է, որ պիտի շարունակական լինի:

### Օգնություն՝ արդեն նաեւ օդից

Արտակարգ իրավիճակների նախարարությունը շարունակում է քայլեր անել միջազգային չափանիշներին համապատասխան արձագանքող ուժեր ունենալու համար:

Մայիսի 20-ին Կոտայքի մարզում ՀՀ ՊՆ առանձին ավիացիոն ուսումնական եսկադրիլիայում կայացավ ՀՀ ՍԻՆ ՀՓԾ հատուկ փրկարարական ջոկատի աերոմոբիլային խմբի ցուցադրական թռիչքը: Մեր փրկարարները մինչ այժմ դեպքի վայր էին հասնում ցամաքով ու ջրով, իսկ հիմա կարող են օգնության գալ նաեւ օդից:

Միջոցառմանը ներկա էր Արտակարգ իրավիճակների նախարարության ղեկավար կազմը:

Հրշեջ-փրկարարական դեսանտային խմբում ընդգրկված է 23 փրկարար, որից երկուսը՝ կին: ՀՀ պաշտպանության նախարարության եւ ՀՀ ՁՈՒ ավիացիայի վարչության աջակցությամբ անցկացված 20-օրյա դասընթացներից հետո հրշեջ-փրկարարները պարաշյուտով մոտ 1000 մ բարձրությունից իրականացրել են մի քանի գործնական թռիչք:

Ցուցադրական ելույթից հետո ԱԻ նախարար Արմեն Երիցյանը շնորհավորեց աերոմոբիլային խմբի անդամներին եւ պարգևատրեց «Առաջնեկ» շքանշանով: Նախապատրաստական դասընթացներն անցկացնելու համար պատվոգրեր հանձնվեցին նաեւ ՀՀ ՁՈՒ ավիացիայի վարչության աշխատակիցներին:

Արմեն Երիցյան, ԱԻ նախարար:

- ՀՀ տարածքն այնպիսին է, որ մենք պետք է կարողանանք բոլոր տեղերում իջեցնել փրկարարներին: Բացի դրանից՝ սա նաեւ միջազգային չափանիշ է: Օգտվելով առիթից՝ ուզում են շնորհակալություն հայտնել մեր երկարամյա գործընկեր պաշտպանության նախարարությանը՝ օժանդակության համար:

Փրկարարների խոսքերով, ուղղաթիռով օգնության հասնելը զգալիորեն կարագացնի եւ արդյունավետ կդարձնի արձագանքման գործընթացը՝ հատկապես լեռներում: Եթե նախկինում, օրինակ, Վարդենիսի լեռներ հասնելու համար պետք էր 8-10 ժամ, ապա հիմա այնտեղ կարելի է հասնել շատ ավելի արագ:

Հատուկ փրկարարական ջոկատի փրկարար Վիկտորիա Խաչատրյանն ասում է, որ վախ, իհարկե, կա, բայց եթե փրկարար ես, պիտի փորձես հաղթահարել վախը:

Համբարձում Վարդունյան, հատուկ փրկարարական ջոկատի փրկարար:

- Մեզ ոգեւորելու համար ուզում են շնորհակալություն հայտնել մեր հրահանգիչներին, որոնք գրագետ ձեւով պատրաստեցին մեզ թռիչքներին:

Առաջիկայում ԱԻ նախարարությունը կպատրաստի 25 հրշեջ-փրկարարից կազմված երկրորդ աերոմոբիլային խումբը:





**ԱԻՆ**  
միացյալ հեռախոսահամարն է  
**1-01**

### Կեղծ ահազանգեր

Մայիսի 19-ին, ժամը 15.42-ին անձը չպարզված քաղաքացուց ահազանգ է ստացվել, որ «Չվարթնոց» օդանավակայանում ռումբ է տեղադրված:

Դեպքի վայր են մեկնել մեկ մարտական հաշվարկ, հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ եւ հրդեհաշիջման կազմակերպման բաժնի օպերատիվ խմբերը:

Իրականացվել է օդանավակայանի շենքում գտնվող քաղաքացիների տարահանում:

Դեպքի վայր ժամանած ԳՅ ՊՆ, ոստիկանության եւ ԱԼԾ աշխատակիցների կողմից իրականացված որոնողական աշխատանքների արդյունքում ռումբ չի հայտնաբերվել:

• Մայիսի 22-ին, ժամը 08.13-ին տեղեկություն է ստացվել, որ «Չվարթնոց» օդանավակայանում՝ Երեւան-Ամստերդամ չվերթի ինքնաթիռում ռումբ է տեղադրված:

Դեպքի վայր են մեկնել մեկ մարտական հաշվարկ եւ հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը: ԳՅ ոստիկանության, ԱԼԾ եւ «Չվարթնոց» օդանավակայանի անվտանգության աշխատակիցների կողմից իրականացված որոնողական աշխատանքների արդյունքում պայթուցիկ սարք չի հայտնաբերվել:

• Մայիսի 24-ին, ժամը 13.13-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Արգիշտի 4/1 շենքում՝ «ՎիվաՍելի» գրասենյակում, պայթուցիկ սարք է տեղադրված:

Դեպքի վայր են մեկնել մեկ մարտական հաշվարկ, հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ եւ ԳԿԿ օպերատիվ խմբերը: ԳՅ ԱԼԾ, ոստիկանության աշխատակիցների եւ ՊՆ սակրավորների իրականացրած որոնողական աշխատանքների արդյունքում պայթուցիկ սարք չի հայտնաբերվել:

### Կարկասահարություն

Մայիսի 19-ին Վայոց ձորի մարզի Փոռ գյուղից ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 18.00-ի սահմաններում տեղացած ուժեղ կարկտի հետեւանքով վնասվել են գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածքներ եւ պտղատու ծառեր:

Կարկասահարված տարածքները «Մե-ՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի կողմից չեն վերահսկվում:

• Մայիսի 20-ին, ժամը 12.30-ին տեղեկություն է ստացվել, որ Սյունիքի մարզի Նորավան գյուղում տեղացած կարկատը վնասել է ցանքատարածություններ եւ այգիներ:

Վնասի չափը ճշտելու նպատակով, Նորավան գյուղ են մեկնել Սյունիքի մարզպետարանի գյուղվարչության աշխատակիցները: Նախնական տվյալներով վնասվել է գյուղի պտղատու այգիների 5-7 տոկոսը:

• Մայիսի 22-ին, ժամը 23.00-ի սահմաններում տեղացած կարճատեւ ուժեղ կարկտի հետեւանքով Սյունիքի մարզում վնասվել են Կապանի տարածաշրջանի եղվարդ եւ Խղրանց գյուղերի բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածքներն ու պտղատու այգիները:

• Մայիսի 20-ին, ժամը 15.09-ին ահազանգ է ստացվել, որ Արարատի մարզի Տիգրանաշեն գյուղին հարակից ավտոճանապարհից ավտոմեքենա է ընկել ձորը եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 85-րդ կմ-ում «Ֆոլքսվագեն» մակնիշի 17 US 275 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթուղուց եւ ընկել ձորը: Փրկարարներն ավտոմեքենայից դուրս են բերել 1986 թ. ծնված Արա Տոռոզյանի դին եւ հանձնել շտապօգնության աշխատակիցներին:

### Ավրոկոռնկը փոսի մեջ

Մայիսի 24-ին, ժամը 16.02-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Բեկնազար

յան փողոցում գտնվող թիվ 188 միջնակարգ դպրոցի մոտ շրջվել է ավտոկոռնկ: Դեպքի վայր են մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ եւ ԳԿԿ օպերատիվ խմբերը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «Լիբեր» մակնիշի 0486 HO պետհամարանիշով ավտոկոռնկի ընթացքի ժամանակ փլուզվել է դպրոցին հարակից ստորգետնյա օժանդակ կառույցի երկաթբետոնե ծածկը: Դրա հետեւանքով ավտոկոռնկը շրջվել է՝ հայտնվելով առաջացած փոսի մեջ: Ավտոկոռնկի վարորդ, 1964 թ. ծնված Ավետիս Նազարյանը ստացել է տարբեր մարմնական վնասվածքներ ու, մինչ փրկարարների ժամանումը, տեղափոխվել «Արմենիա» բժշկական կենտրոն: Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

### Փլուզումներ

Մայիսի 20-ին, ժամը 17.15-ին տեղեկություն է ստացվել, որ Արարատի մարզի Նոյակերտ գյուղում ինքնափլուզվել է Ե. Սարգսյանին պատկանող տունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը: Պարզվել է, որ ինքնափլուզվել է չբնակեցված հողաշեն տան պատը՝ մոտ 20 քմ մակերեսով:

Տուժածներ չկան:  
• Մայիսի 25-ին, ժամը 22.47-ին ահազանգ է ստացվել, որ Լոռու մարզի Շահումյան գյուղում փլուզվել է Ն. Թամրազյանին պատկանող տան պատը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը: Տեղում պարզվել է, որ տեղացած հորդառատ անձրեւի հետեւանքով ինքնափլուզվել է առանձնատան հարավային պատը՝ 60 քմ մակերեսով:

Տուժածներ չկան:

### Պնացքը հարվածել է

Մայիսի 22-ին, ժամը 21.47-ին տեղեկություն է ստացվել, որ Վանաձորի Լոռվա խճուղու 1 հասցեին հարակից տարածքում թիվ 34-01 բեռնատար գնացքը հարվածել է 1978 թ. ծնված Սպարտակ Նավասարդյանին:

Տուժածը ստացել է աջ ուսի փափուկ հյուսվածքի սալջարդ եւ տեղափոխվել Վանաձորի թիվ 1 հիվանդանոց: Ըստ բժիշկների՝

րի՝ նրա առողջական վիճակը բավարար է:

### Գեղը վարարել է

Վայոց ձորի մարզի Վայք քաղաքից ստացված տեղեկության համաձայն՝ մայիսի 21-ին Արփա գետի վարարման հետեւանքով քանդվել է հունի 50 մ երկարությամբ գաբիոնային շարվածքը, ինչի հետեւանքով գետի ջրերի մի մասը հոսում է Ազատեկ գյուղին պատկանող մոտ 5 հա մշակովի հողատարածքով:

Գետի հունի վերականգնողական աշխատանքները կիրականացվեն ջրի մակարդակը նվազելուց հետո:

### Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 12 դեպք:

### Գրդեհ Դիլիջանում

Մայիսի 21-ին, ժամը 10.39-ին տեղեկություն է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Դիլիջանում գտնվող Կոնյակոստոյանի տան տարածքում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Գրդեհը մեկուսացվել է ժամը 11.07-ին, մարվել՝ 12.17-ին:

Այրվել են երկհարկանի քրթեջի 2-րդ հարկի խոհանոցն ու ննջասենյակը՝ 60 քմ ընդհանուր մակերեսով, ինչպես նաեւ քրթեջի տանիքը՝ 121 քմ մակերեսով:

### Այրվածքներ հրդեհից

Մայիսի 25-ին, ժամը 12.57-ին ահազանգ է ստացվել, որ Գեղարքունիքի մարզում՝ Գավառի Ազատության փողոցում ավտոմեքենա է այրվում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Գրդեհը մեկուսացվել է ժամը 13.08-ին, մարվել՝ 13.15-ին:

Այրվել են Գ. Միրիբյանին պատկանող «ԳԱԶ-53» մակնիշի առանց պետհամարանիշի ավտոմեքենայի խցիկը եւ թափքը:

Գրդեհի հետեւանքով այրվածքներ է ստացել ավտոմեքենայի ուղեւոր՝ 1983 թ. ծնված Սեդա Սարգսյանը, որը նախքան հրշեջ-փրկարարների ժամանումը տեղափոխվել է Գավառի կենտրոնական հիվանդանոց, այնուհետեւ՝ Երեւանի այրվածքների կենտրոն:

Ըստ բժիշկների՝ Ս. Սարգսյանի առողջական վիճակը ծայրահեղ ծանր է:

## միջազգային լուրեր

### Չեքանգվել են չվերթեր

Իսլանդիայի Գրինսվոլտն հրաբխի ժայթքման պատճառով երկրի իշխանությունները փակել են Ռեյկյափիկ-Կեֆլավիկ միջազգային օդանավակայանը:

Գրինսվոլտնը գտնվում է երկրի հարավարեւելքում եւ պատված է Վատնայոկուլ սառցաշերտի հյուսիս-արեւմտյան հատվածով: Գրինսվոլտնի առաջացրած ծխի սյունը բարձրացել է 20 կմ:

Ներկայումս հրաբխի շուրջը 220 կմ շառավղով, թռիչքների համար մոտավոր է արգելադրվում:

2010 թվականի գարնանը էյաֆյադլայոկուլը հրաբխի ժայթքումը հանգեցրեց Եվրոպայի զգալի մի հատվածի ավիասպասարկման դադարեցմանը:

Ավիաընկերությունները, զգուշանալով օդանավերի շարժիչների խափանումներից, կանգնեցրին չվերթերը հրաբխային մոխրի անպի պատճառով, որը տարածվել էր Եվրոպայի հյուսիսում մեկ: Համաշխարհային ավիացիոն շուկայի մոտ 29 տոկոսը կաթվածահար էր եղել:

Սակայն այս անգամ իսլանդական օդերուփաբանները հայտնում են, որ միջազգային օդահաղորդակցությանը վտանգ չի սպառնում:

Իսլանդական ավիացիոն իշխանությունների պաշտոնական ներկայացուցիչը հայտնել է, որ քամին հրաբխային մոխիրը բռնում է դեպի Գրենլանդիա, ուստի այն թվարթ թե կարողանա որեւէ կերպ ազդել Եվրոպայում ինքնաթիռների թռիչքների վրա:

Գրինսվոլտնի ժայթքումն Իսլանդիայում կարող է հանգեցնել ջրհեղեղների: Գիտնականները դա բացատրում են այն հանգամանքով, որ Գրինսվոլտնի հրաբխային փոշին ավելի կոշտ է, քան էյաֆյադլայոկուլինը:

Գրինսվոլտնի վերջին 2004 թվականին տեղի ունեցած ժայթքման ժամանակ ավիաընկերություններն ստիպված եղան փոխել տրանսատլանտյան չվերթերի ուղղությունը: Ինքնաթիռներն սկսեցին թռչել Իսլանդիայի հարավով: Ընդ որում, ի դեպ, ոչ մի օդանավակայան չի փակվեց: Գրինսվոլտնը կարող է, ինչպես դա արդեն եղել է նախկինում, հանգեցնել սառցաշերտի մի հատվածի եւ առաջ բերել տեղային ջրհեղեղներ: Ժայթքումներն Իսլանդիայում հազվադեպ չեն, քանի որ այն գտնվում է բարձր սեյսմականությամբ գոտում:

Ռուսական խոշորագույն ավիաչվերթ փրկարանացնող «Ալեոֆլուտ» ընկերությունը Գրինսվոլտն կոչվող հրաբխից առաջացած մոխրի պատճառով հետաձգել է մայիսի 25-ին նախատեսված չվերթը Համբուրգ:

Գերմանիայի հյուսիսում մոտ 500 չվերթ է հետաձգվել:

Իսլանդիայի հարավում Գրինսվոլտն հրաբխից առաջացած ծուխը հասել է 20 կմ բարձրության: Իսլանդական փորձագետներն ավելի վաղ հայտարարել են, որ հրաբուխը ակտիվ կլինի մի քանի օր կամ շաբաթ եւ չի առաջացնի համաեվրոպական ավիացիոն խառնաշփոթ, ինչպես եղավ 2010 թվականի գարնանը՝ իսլանդական մեկ այլ հրաբխի ժայթքման ժամանակ:

Բրիտանական խոշորագույն ավիաընկերությունը չեղյալ է հայտարարել Լոնդոնի եւ Շոտլանդիայի բոլոր չվերթերը: Բրիտանական օդերուփաբանների տվյալներով՝ Իսլանդիայում Գրինսվոլտն հրաբխի արդյունքում առաջացած մոխրի ամպը կհասնի Շոտլանդիա: Ավելի վաղ շոտլանդական «Լոգանեյր» եւ մի քանի այլ ավիաընկերություններ, հետաձգել են երեքշաբթի օրվա համար նախատեսված զրեթե բոլոր չվերթերը, բացառությամբ տեղի չվերթերը դեպի շոտլանդական կղզիներ:

### Ֆոտոռեպորտաժ՝ 4-րդ էջում:

### Ուժեղ փոթորիկ Ավստրալիայի հարավում

Սիդնեյում գտնվող Նոր հարավային Ուելս շրջանում ուժեղ փոթորիկ է գրանցվել: Քամու արագությունը հասել է 100 կմ/ժ: Մեկ գիշերվա ընթացքում 50 մմ տեղումներ են եղել: Հաղորդվում է, որ վնասված են էլեկտ-



րահաղորդակարերը: Օդերուփաբանների կանխատեսումների համաձայն՝ եղանակը մոտակա օրերին բարենպաստ չէ:

### Տոռնադոներ ԱՄՆ-ում

ԱՄՆ Միսուրի նահանգում մայիսի 22-ին տեղի ունեցած կործանարար տոռնադոյից հետո, որն ԱՄՆ-ի պատմության ընթացքում ամենամեծն ու կործանարարն է համարվում, եւս մի քանի տոռնադոներ են գրանցվել: Մայիսի 24-ին ոչ պակաս հզոր տոռնադոներ են եղել Օկլահոմա նահանգում: Տեղի իշխանության տվյալներով զոհվել է մեկ մարդ, մի քանիսը վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց: Տոռնադոն նյութական մեծ վնասների պատճառ է դարձել:

Օդերուփաբանները նախապես զգուշացրել էին սպասվող վտանգի մասին, ինչի արդյունքում հնարավոր է եղել խուսափել զոհերի ավելի մեծ թվից:



## Արագ արձագանքներ ԼՂՀ-ում Մայիսի 19-26-ը

### ՃՏՊ

Մայիսի 19-ին ժամը 22:40-ին ահագնազ է ստացվել, որ Ստեփանակերտ-Շոշ ավտոճանապարհի 5 կմ-ին տեղի է ունեցել ավտոպատահար, կան տուժածներ: Դեռևս չպարզված հանգամանքներում «Ձապորո-ժեց» մակնիշի ավտոմեքենան, կորցնելով ղեկի կառավարումը, դուրս է եկել ճանապարհից՝ ընկել կամրջի տակ, հոսող գետի մեջ: Պատահարի հետևանքով մեքենայի վարորդ Ա. Սարգսյանը (ծնվ. 1955 թ.) եւ ուղեւոր Դ. Պետրոսյանը տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոց: Ըստ բժշկների, Դ. Պետրոսյանի վիճակը գնահատվում է կայուն ծանր, իսկ Ա. Սարգսյանը, ստանալով համապատասխան բուժօգնություն, դուրս է գրվել հիվանդանոցից:

### Հորդառատ անձրևներ եւ կարկտահարություն

Մայիսի 21-ի գիշերը տեղացած հորդառատ անձրևի հետևանքով մայրաքաղաքի Արմ. Իսակովի 1 շենքի նկուղը եւ բակը լցվել է ջրով: Դեպքի վայր է մեկնել Ստեփանակերտի հրշեջ-փրկարար մասի «Կամազ» հրշեջ մեքենան՝ մարտական հաշվարկով: Իրականացվել են ջրահեռացման աշխատանքներ: Նույն գիշեր ԼՂՀ բոլոր շրջաններում տեղացել է հորդառատ անձրև, իսկ Հարյուրի շրջանի Դրախտիկ, Խժաբերդ, Տումի, Մեծ Թաղեր, Տող համայնքներում տեղացած կարկուտը զգալի վնասներ է հասցրել բանջարաբուստա-

նային կուլտուրաներին:

Մայիսի 22-ին ԼՂՀ տարածքում կարկտահարվել են Մարտակերտի շրջանի Վանք, Շահմասուր, Ծմակահող գյուղերը, վնասվել են բանջարաբուստանային կուլտուրաները: Ծմակահող գյուղում կարկտահարվել է 33 հա ցորենի արտ, Քաշաթաղի շրջանի Ծաղկաբերդ գյուղում վնասվել են բանջարաբուստանային կուլտուրաներ, 150 հա ցորենի արտ, Ասկերանի շրջանի Իվանյան, Նորագյուղ, Գովսեփավան, Լուսաձոր, Դահրավ, Աստղաշեն, Խնձրիստան, Պատարա գյուղերում վնասները ճշտվում են:

Մայիսի 23-ին կարկտահարվել են Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքը եւ Ասկերանի շրջանի Պատարա գյուղը: Վնասների մասին տվյալները ճշտվում են: Հանրապետության մյուս շրջաններում տեղացել են հորդառատ անձրևներ: Նույն օրը Ստեփանակերտում տեղացած հորդառատ անձրևների հետևանքով մի շարք շենքերի եւ տների նկուղներ լցվել են ջրով (Աղմիրալ Իսակովի 1, Տիգրան Մեծի 13ա, Մխիթար Գոշի 10ա, Առաքելյան): Դեպքի վայր մեկնած հրշեջ-փրկարարները իրականացրել են ջրահեռացման աշխատանքներ:

Հորդառատ անձրևի հետևանքով մայրաքաղաքում առաջացել են մի շարք այլ արտակարգ իրավիճակներ:

Օպերատիվ հերթապահ մասում գրանցված բոլոր կանչերին արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման փրկարարներն արձագանքել են՝ ցուցաբերելով անհրաժեշտ օգնություն (մեքենաների՝ ջրից դուրս հա-

նում, քաղաքացիների տարահանում եւ այլն):

Նույն օրը հորդառատ անձրևի պատճառով հաչեն գետը վարարել, դուրս է եկել հունից եւ ողողել Նոր Սեյտուլան համայնքի գետամերձ մի շարք բնակելի տների նկուղներ: Առավել վնասվել է Ղազարյանների տունը: Բազմանդամ ընտանիքը (11 հոգուց բաղկացած) ժամանակավորապես տարահանվել է:

Նույն օրը, ժամը 19:00-ի սահմաններում Մարտակերտի շրջանի Հարությունագոմեր համայնքում վարարած առուն քշել է 1997 թ. ծնված Մարիա Օլեգի Աբրահամյանին, որի դին գտնվել է ժամը 20:00-ի սահմաններում՝ գետի մեջ:

### Հրդեհներ

Մայիսի 19-ին հրդեհ է բռնկվել Մարտունու շրջանի Շեխեր գյուղի տարածքում: Դեպքի վայր է մեկնել Կարմիր Շուկայի հրշեջ մեքենան՝ մարտական հաշվարկով: Հրդեհը մարվել է: Բռնկված հրդեհի հետևանքով այրվել է Բ.Ղուլյանին պատկանող չոր խոտ:

Մայիսի 21-ին հրդեհ է բռնկվել ք. Ստեփանակերտի Կամոյի 2 հասցեում: Դեպքի վայր է մեկնել Ստեփանակերտի հրշեջ-փրկարարական մասի 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Հրդեհի հետևանքով այրվել է առանձնատան շոգեբաղնիքը:

### Չենք-զինամթերք

Մայիսի 20-ին տեղեկություն է ստացվել, որ Տիգրան Մեծ 42 հասցեում հայտնաբերվել է գնդիկավոր ռումբ: Ձինամթերքը վնասագերծվել է ՓԾ սակրավորների կողմից:

## սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. մայիսի 19-ից 25-ը ՄՊԱԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ ուժգնությամբ գրանցել է մեկ երկրաշարժ: Այն տեղի է ունեցել մայիսի 23-ին Սպիտակ քաղաքից 9 կմ հարավ-արեւելք:

**Տարածաշրջանում.** 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել վեց երկրաշարժ, որից չորսը՝ Թուրքիայի տարածքում: Մայիսի 18-ին 3 բալանոց ստորգետնյա ցնցում է գրանցվել Կարս քաղաքից 6 կմ հյուսիս-արեւմուտք: Մայիսի 20-ին տեղի է ունեցել 5.8 մագնիտուդով (ուժգնությունը 8 բալ) երկրաշարժ, որի էպիկենտրոնը գտնվում է Թուրքիայի արեւմուտքում՝ Ուսակ քաղաքից 58 կմ դեպի հյուսիս-արեւմուտք: Ստորգետնյա տատանումները զգացվել են երկրի արեւմտյան եւ կենտրոնական մի քանի շրջաններում, կա 4 մարդկային զոհ եւ 80 տուժած, վնասվել են շենքեր, ընդհատվել է էլեկտրամատակարարումը: Մայիսի 21-ին Բուլանիկ քաղաքից 2 կմ

հյուսիս-արեւմուտք գտնվող էպիկենտրոնով երկրաշարժի ուժգնությունը կազմում է 4-5 բալ: Հաջորդ օրը Վան քաղաքից 54 կմ հարավ-արեւմուտք գրանցվել է 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Մայիսի 25-ին նույն ուժգնությամբ սեյսմիկ իրադարձություն է տեղի ունեցել Թուրքիա-Իրան սահմանային գոտում՝ Դողուբայազետ քաղաքից 30 կմ հյուսիս-արեւելք: Ստորգետնյա ցնցում է գրանցվել մայիսի 24-ին Իրանի տարածքում՝ Ահար քաղաքից 68 կմ հարավ-արեւելք, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 4 բալ:

**Տարածաշրջանից դուրս.** գրանցվել է 6.1 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ, որը տեղի է ունեցել մայիսի 21-ին Խաղաղ օվկիանոսի հարավում՝ Նոր Զելանդիայի Կերմադեկ կղզիների տարածքում: Չոհեր եւ ավերածություններ չկան:

ԱԻՆ ՄՊԱԾ գործակալություն

## եղանակի տեսություն

### Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

**Հանրապետության տարածքում.** մայիսի 27-ից 31-ը առավելապես հյուսիսային շրջաններում գիշերված առաջին կեսին եւ օրվա երկրորդ կեսին սպասվում է կարճատև անձրև եւ ամպրոպ, առանձին վայրերում կտեղա կարկուտ: Քամին՝ հարավ-արեւմտյան՝ 4-9 մ/վրկ, ամպրոպի ժամանակ՝ քամու ուժգնացում՝ 14-18 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը՝ բացառությամբ արեւելյան շրջանների, 28-ից 31-ն աստիճանաբար կբարձրանա 3-5 աստիճանով:

Օդի ջերմաստիճանը մայիսի 27-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ +3... +8, Տավուշում՝ +10... +14, Լոռիում՝ +7... +10, Արագածոտնի նախալեռներում՝ +10... +13, Արարատյան դաշտում՝ +10... +13, Սյունիքի հովիտներում՝ +10... +15, Սյունիքի նախալեռներում՝ +5... +8, Արցախում՝ +10...

+14 աստիճանի սահմաններում: Օդի ջերմաստիճանը մայիսի 27-ի գերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +17... +21, Տավուշում՝ +15... +20, Լոռիում՝ +14... +17, Արագածոտնի նախալեռներում՝ +24... +27, Արարատյան դաշտում՝ +25... +28, Սյունիքի հովիտներում՝ +20... +23, Սյունիքի նախալեռներում՝ +13... +17, Արցախում՝ +14... +18 աստիճանի սահմաններում:

**Երեւանում.** մայիսի 27-ին եւ 29-ին հնարավոր է կարճատև անձրև եւ ամպրոպ, ամպրոպի ժամանակ՝ քամու ուժգնացում 13-17 մ/վրկ: 28-ին եւ 30-31-ի երեկոյան ժամերին սպասվում է ամպրոպ, անձրևի հավանականությունը փոքր է:

Օդի ջերմաստիճանը մայիսի 27-ի գիշերը կտատանվի +11... +13, ցերեկը՝ +26... +28 աստիճանի սահմաններում:

## Շնորհավորանք



Արարատ Բառբառյանը ծնվել է 1961 թ. մայիսի 24-ին: 1978 թ. ավարտել է Արարատի մարզի Ջրաշեն գյուղի դպրոցը, նույն տարի ընդունվել է Գավառի ինդուստրիալ տեխնիկում: 1979-81 թթ. ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: Վերադառնալով շարունակել է ուսումը տեխնիկումում եւ այն ավարտելուց հետո՝ 1985 թ. ընդունվել է Չելյա-

բինսկ քաղաքի գյուղինստիտուտը: 1991 թ. ավարտելով ինստիտուտը՝ ստացել է ինժեներ-մեխանիկի մասնագիտություն: 1985-94 թթ. աշխատել է Արարատի մարզի Ջրաշեն գյուղում՝ որպես դաշտավարական բրիգադավար:

1994 թ. նոյեմբերին անցել է ծառայության թիվ 10 հրշեջ-փրկարարական ջոկատում՝ որպես պահակախմբի պետ: 1998 թ. նույն հրշեջ մասում ծառայել է որպես տեսուչ, իսկ 1999-2003 թթ.՝ ավագ տեսուչ:

2003 թ. մայիսից մինչ այսօր թիվ 10 հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարն է:

«Արտակարգ թերթ»-ը շնորհավորում է Արարատ Բառբառյանին՝ ծննդյան 50-ամյակի կապակցությամբ, մաղթում նրան քաջ առողջություն, ծառայողական սխրանքներ եւ հաջողություններ իբրեւ կյանքի մշտական ուղեկից:



## ՌՈՍԳՈՍԱՏՐԱՆ ԱՐՄԵՆԻԱ

### «Էլիտ գրուպ» . կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատար տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



# արտակարգ իրավիճակների նախարարություն...

## Պեղապարզելով ուսուցում ճգնաժամային կառավարման պեղական ակադեմիայում

Այս տարվա ապրիլի 28-ին ՀՀ կառավարության նիստում որոշվեց, որ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիային հատկացվելու է անվճար ուսուցման 60 տեղ: Դրանք վերաբերում են բակալավրիատի միայն երկու մասնագիտությունների՝ Զրդեհային պաշտպանություն և Փրկարար գործ՝ համապատասխանաբար 30/30 հարաբերությամբ: Անվճար սովորած ուսանողներն ավարտելուց հետո պիտի 4-5 տարվա պարտադիր ծառայության անցնեն Արտակարգ իրավիճակների նախարարությունում:

- Այս մասնագիտությամբ ընդունվողների առջև մենք բավական խիստ պայմաններ ու պահանջներ ենք դնելու, - ասում է ԱԻՆ ճգնաժամային կառավարման շայկանդուխտ Ղարիբյանը, - պետք է լավ սովորեն, կիսատ չթողնեն ուսումը, որովհետև եթե կիսատ թողնեն, պիտի փոխհատուցեն իրենց ուսման վրա պետության կատարած ծախսերը: Մենք ենթադրում ենք, որ այս տարի այս երկու մասնագիտություններով կընդունվեն մարդիկ, ովքեր արդեն անցել են պարտադիր զինվորական ծառայություն, հարմարված են շարային պատրաստությանն ու զինվորական

պահանջներին և ուսումը կիսատ չեն թողնի, որ գնան բանակ: Ուսման ավարտին նրանք կստանան ճարտարագետի որակավորում:

Այսօր ճԿՊԱ-ում սովորում է շուրջ 1200 ուսանող: Ուսուցումն



իրականացվում է եւ՝ բակալավրիատում, եւ՝ մագիստրատուրայում: Կա նաև միջին մասնագիտական ծրագիր, որն իրականացվում է Ստեփանավանում: 2011 թվականին այս բոլոր ծրագրերի շրջանավարտների թիվը միասին կազմելու է մոտ 200: Բացի Զրդեհային պաշտպանություն

և Փրկարար գործ մասնագիտություններից, Ակադեմիայում իրականացվում է նաև ուսուցում այլ մասնագիտություններով, որոնք վճարովի են՝ ճգնաժամային կառավարում, Քաղաքացիական պաշտպանություն, Պաշտպա-

թվականին՝ ՀՀ կառավարության որոշմամբ՝ որպես կադրերի վերապատրաստման ինստիտուտ: Գլխավոր խնդիրը ճգնաժամային կառավարման գիտության ուսումնասիրությունն է, հանրապետությանն առանձնահատուկ աղետների ուսումնասիրումն ու համակարգումը, դասավանդման մյուսների ձեւավորումը, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության բնագավառում նոր մոտեցումների ձեւավորումը, միջազգային փորձի ուսումնասիրությունը և դրանց կիրառումն ուսումնական գործընթացում:

Այս տարվա մարտին ԱԻ նախարար Արմեն Երիցյանն Ակադեմիայի ուսանողների հետ հանդիպման ժամանակ ասաց, որ այսուհետ լավագույն շրջանավարտները, ովքեր կտիրապետեն ռուսերենի, մեկ այլ օտար լեզվի, համակարգի ու առաջին օգնության հմտություններին, անմիջապես աշխատանքի կանցնեն նախարարությունում:

- Այս տարի ճգնաժամային կառավարման կենտրոնում աշխատելու համար անցկացված հարցազրույցին մեր ուսանողներից 4 հոգի արդեն դրական արդյունք են ցուցաբերել, - ասում է ԱԻՆ ճԿՊԱ ղեկավարի տեղակալ Շայկանդուխտ Ղարիբյանը:

Ինչպես հավաստում է պրո-ռեկտորը՝ ուսումնական ծրագրե-

րում բարեփոխումներ են կատարվել: Ավելացել են առաջին բուժօգնության, օտար լեզվի, համակարգչային դասընթացների ժամերը:

- Առաջին բուժօգնության վերաբերյալ բովանդակային ահագին փոփոխություններ ենք արել, - նշում է ղեկավարի տեղակալը, - մինչև հիմա մենք չունեինք ներարկումներին վերաբերող մաս, որովհետև, ինչպես գիտեք, փրկարարն իրավունք չունի տուժածին ներարկում անելու: Հիմա պայմանավորվածություն ունենք Երևանի շտապօգնության ծառայության հետ, որպեսզի մի կիսամյակ իրենք անցկացնեն այդ դասընթացը, ստուգաբան էլ իրենք ընդունեն: Դրանից հետո կտեսնենք, թե հետագայում ինչպես կլինի. գուցե վկայագրով, հավաստագրով կամ մեկ այլ ձևով փրկարարին իրավունք կտրվի ներարկում կատարելու և առաջին օգնություն ցուցաբերելու մինչև բուժանձնակազմը կգա դեպքի վայր:

ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան նաև միջազգային համագործակցության տարիների փորձ ունի՝ Իտալիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Շվեդիա, Շվեյցարիա և այլ երկրներ ու միջազգային կազմակերպություններ:

Անի Ստեփանյան

## Իսլանդիա. Գրիմսվոլն հրաբխի ժայթքումը. 23.05.2011





## Տոնադոների առեղծվածը

**Տոնադոները շարունակում են վրա հասնել առանց զգուշացման՝ առանց որևէ տրամաբանական հաջորդակա- նության, որով հետազոտողներին զգում են մտատանջությունների մեջ: Անլուծելի հանելուկ է. ինչու՞ են դրանք գոյանում հենց այս սարսափելի ամպրոպից, այլ ոչ թե մյուսից, ինչու՞ ենց առաջ, այլ ոչ թե վաղը, ինչու՞ է մեկն ավելի հզոր, քան՝ մյուսը: Եւ ամենահաճախ տանջող հար- ցերից մեկը՝ ինչու՞ է մեկի տրամագծը 200 ոտնաչափ, մյուսինը՝ մեկ մղոն եւ ավելի:**

Հիդրոօդերեուսաբաններն ու հետազո- տողները չեն կարողանում պատասխանել այս հարցերին: Նրանք կարող են բացատրել միայն տոնադոների առաջացման հիմնա- կան նախապայմանները՝ վերելում չոր սա- ռը օդը բախվում է տաք խոնավ օդի մակե- րեսին: Սակայն նրանք չեն կարող ասել, արդյո՞ք տոնադոն նեղ կլինի, թե՛ լայն, թույլ, թե՛ հզոր:

«Դա ամենամեծ առեղծվածներից մեկն է», ասում է Օկլահոմայի Հիդրոօդերեուսա- բանական ազգային ծառայության փոթո- րիկների կամխատեսման կենտրոնի հիդրո- օդերեուսաբան Գրեգ Կարբինը: Նա նշում է 2003 թվականի «հարձակումը», երբ 50-75 յարդ լայնությամբ հզոր տոնադոներին հա- ջորդեց մեկ ու կես մղոն լայնությամբ հսկան, որը հիմնահատակ ավերեց Գրինսբուրգը: «Ինչպե՞ս է բնությունն անում այս ամենը»:

Ինչպես ասում են մասնագետները, եղա- նակն ուսումնասիրող գիտությունը երիտա- սարդ է, իսկ տոնադոների ուսումնասիրու- թյունը՝ նորածին մանուկ: Մինչև 1950 թվա- կանը ԱՄՆ-ում պետական հեռուստատեսու- թյամբ եղանակի մասին պատմելիս նույնիսկ չէին օգտագործում «տոնադո» բառը՝ վա- չենալով, որ բնակչության շրջանում խու- ճապ կսկսվի:

Նույնիսկ հիմա, ի տարբերություն եղա- նակային այլ երեւոյթների, տոնադոյի ներ- սում քամու ուժգնությունը չի չափվում որեւ- է սարքի օգնությամբ, այլ որոշվում է ըստ

հասցրած վնասի: Այսպիսին է եղանակը քա- ոսի եզրին՝ հզոր մի տարերք, որի ուժին չի դիմանում ոչ մի սարք:

Երբեւէ դիտված ամենալայն տոնադոն՝ 2,5 մղոն տրամագծով, հարվածել է Նեբրաս- կա նահանգին 2004 թվականի մայիսի 22- ին: Հիմնականում տոնադոյի հասցրած վնասի չափերը կապում են դրա լայնության հետ, քանի որ մեծ փոթորիկն ավելի մեծ տարածքներ է ընդգրկում:

Կարբինը նշում է, որ տոնադոյի լայնու- թյունն իրոք կարելու է բաց հետազոտող- ները դեռ պետք է որոշեն՝ հաշվի են առնելու դրա չափն ու ձևը, թե՞ քամու ուժգնությունը: «Աթմոլոգիայի ծագարը կարող է ամե- նատարբեր չափերի լինել՝ շատ փոքրից մինչև շատ մեծ», - ասում է Կարբինը:



Տոնադոների հաջորդ հանելուկը դրանց հայտնվելու ճշգրիտ վայրը կանխա- տեսել է. «Երեկ Ջոնսթոնի հզոր տոնադո- անցավ՝ բնակելի վայրերով»՝ նշում է Կար- բինը, «եթե այն մի քանի մղոն հարավ անց- ներ, մենք, հնարավոր է, արդեն չգրուցեինք դրա մասին»:

**Տարերք՝ տարբեր անուններով**  
Գարեր շարունակ երկրագնդի վրա մո- լեզվում են փոթորիկներ սփռելով մահ եւ ավերածություն: Հարավարեւելյան Ասիա- յում փոթորիկն անվանում են արեւարածա- յին ցիլոն, Ասիայի մյուս հատվածներում՝ քայֆուն, Ֆիլիպիններում այն հայտնի է բա- գիտ անունով, Ավստրալիայում՝ վիլի-վիլի,

Կարիբյան ծովում եւ հյուսիսային Ատլան- տիկայում տոնադո կամ մրրկայուն:

Փոթորիկների առաջին պաշտոնական գրանցումը կատարվել է 1667 թվականի օգոստոսի 27-ին ԱՄՆ-ի Վիրջինիա նահան- գի Ջեյմսթաուն քաղաքում: Լոնդոնյան ամ- սագրերից մեկում տպագրված «Արտասու- վոր լուրեր Վիրջինիայից» հոդվածում աս- վում էր. «Փոթորիկը տներ է փլուզել եւ շա- տերը մնացել են փլատակներում»:

**Աղետ Կարիբյան ծովում**  
Կարիբյան ծովի ամենասարսափազու- փոթորիկը մոլեզվեց 1780 թվականի հոկ- տեմբերի 10-ից 12-ը: Իր ճանապարհին այն ոչնչացրեց ամեն ինչ՝ Բարբադոս կղզուց մինչև Պուերտո Ռիկո: Աղետին զոհ գնաց 20-30 հազար մարդ: Տարերքը գրեթե ամ- բողջությամբ ոչնչացրեց Բրիտանիայի, Իս- պանիայի եւ Ֆրանսիայի նավատորմերը:

**Մայրաքաղաքը վերածվեց ավերակների**  
1930 թվականի սեպտեմբերի 3-ին մոտ 300 կմ/ժ արագությամբ շարժվող փոթորիկը հարձակվեց Դոմինիկյան Հանրապետու- թյան վրա: Այն սպանեց երկու հազար մար- դու եւ ամբողջությամբ ոչնչացրեց մայրա- քաղաք Սանտո Դոմինգոն:

**Վերա**  
Նագոյա քաղաքի 70-րդ տարեդարձի առթիվ ճապոնիայի Հոնայու կղզում մեծ տո- նախմբության էին պատրաստվում: Այդ ժա- մանակ Նագոյան Տոկիոյից եւ Օսակայից հետո ճապոնիայի երրորդ խոշոր քաղաքն էր, այնտեղ բնակվում էր երկու միլիոն մարդ: Տոնի նախօրեին նախազգուշացում ստաց- վեց մոտեցող քայֆունի մասին: Օդերեու- թաբանները քայֆունն անվանեցին Վերա: Թայֆունի մասին լուրը շատ հանգիստ ընդունվեց: ճապոնացիները վաղուց էին սո- վորել քայֆուններին, ցունամիներին, հրաբ- խի ժայթքումներին եւ երկրաշարժերին: Նրանց համար, որպես օվկիանոսի կղզիներ- լում ապրողների, այդ աղետներն անխու-

սափելի ռիսկ են: Թայֆունը Նագոյայի ավերին հասավ 1959 թվականի սեպտեմբերի 25-ին: Հինգ մետրանոց ալիքներն իրենց ճանապարհին ոչնչացնում էին ամեն ինչ՝ ամբարտակներ, կամուրջներ, շենքեր: Փոթորկային քամին վեր էր բարձրացնում քանդված շինություն- ները, արմատախիլ անուն բազմամյա ծառե- ռը: Միայն մեկ բարձրահարկ շենքում մահա- ցավ 80 մարդ: Փոթորիկը մոլեզվեց երեք ժամ, այնուհետեւ շարժվեց հյուսիս, որտեղ էլ հանդարտվեց դառնալով ամենը արեւա- դարձային քամի:

Նագոյայի մեկ երրորդը հայտնվեց ջրի տակ: Քաղաքի մյուս մասում միայն ավե- րակներ էին մնացել: Ալիքներն ափ էին հա- նել մոտ 20 մալ, փողոցները ծածկված էին դիակներով: Մեկ շաբաթ շարունակ 25 հա- զար մարդ ստիպված էին անցկացնել իրենց տների տանիքների վրա:

Աղետի հետեւանքները սարսափելի էին. գոհվել էր 5 հազար եւ տուժել ավելի քան 32 հազար մարդ, Նագոյայի հարյուրավոր բնա- կիչներ անհետ կորան, մոտ 40 հազար ըն- տանիք մնաց անօթեւան:

Չնայած մարդկային եւ նյութական ահ- նելի կորուստներին՝ Նագոյայի բնակիչները ձեռնամուխ եղան հարազատ քաղաքի վե- րականգնմանը եւ շուտով այդ խոշոր արդ- յունաբերական կենտրոնում կյանքն ընթա- ցավ իր բնական հունով:

**Տոնադոների տարի**  
1953 թվականի հունվար-հունիս ամիս- ներին Միացյալ Նահանգների տարածքով անցավ շուրջ 250 տոնադո: Երկրի շատ շր- ջաններ լուրջ վնասներ կրեցին: Մայիսի 11- ին փոթորիկը ոչնչացրեց Տեխաս նահանգի կենտրոն Ռեյկո քաղաքը եւ սպանեց 114 մարդու: Հունիսի 8-ին տոնադոներ անցան Միչի- գան եւ Օհայո նահանգներով: Միայն Ֆլինտ քաղաքում զոհվեց 113 մարդ: Հաջորդ օրը մեկ այլ փոթորիկ հարձակվեց Վուստեր քա- ղաքի վրա՝ իր հետ տանելով 94 մարդու կյանք:

## Էլեկտրահաղորդագծերի հրդեհավտանգավորությունը վթարային ռեժիմների ժամանակ

**Սկիզբը՝ նախորդ համարներում**

Էլեկտրական ցանցերի եւ էլեկտրական սար- քավորումների հրդեհային վտանգավորու- թյունը մեծապես կախված է էլեկտրական ար- մատուրի (ամրանի), էլեկտրահաղորդագծերի մակնիշի, դրանց անցկացման եւ մոնտաժի ձևերի ճիշտ ընտրությունից: Շատ կարելու է նաեւ (հրդեհների նախապայման համար) էլեկտրասարքավորումների շահագործման ժամանակ էլեկտրակայանքների սարքվածքի կանոնների (ԵՍԿ) պահանջների պահպանու- մը:

**Էլեկտրահաղորդագծերի հրդեհային անվտանգության հասկացությունը բնու- թագորդ ասպեկտները հետևյալն են՝**

- Էլեկտրահաղորդագծերի հրդեհի աղբյուր լինելու (դառնալու) ունակությունը (սեփական մեկուսացման բռնկումը՝ պաշտպանիչ կամ կողող կառուցատարրերի հաջորդական այր- մամբ):
- Էլեկտրահաղորդագծերի մեկուսիչների՝ այրումը տարածելու ընդունակությունը, երբ այրումը կատարվել է բռնկման կողմնակի աղբ- յուրներից.
- կարճ միացման պահին հաղորդիչ մե- տաղների շիկացած մասնիկներ առաջացնելու ունակությունը, որոնք կարող են վառել մոտա- կայքում գտնվող այրման ընդունակ նյութերն ու առարկաները:
- Առաջին երկու ասպեկտները փոխկա-

պակցված են, քանի որ (վերջնական արդյուն- քում) արտահայտում են մալուխային գծերի էլեկտրամեկուսիչների այրվելու ընդունակու- թյան աստիճանը: Դրանց միջեւ տարբերությու- նը մեկուսիչների այրման (վառման) տարբեր աղբյուրներն են. մերքին՝ գերծանրաբեռնվա- ծության հոսանքներ եւ կարճ միացում, եւ ար- տաքին՝ օրինակ, հրդեհի ջերմաստիճանը:

Կախված անցումային դիմադրության մե- ծությունից (արժեքից) կարճ միացումը կարող է լինել ուղիղ (խուլ, մետաղական, լրիվ) եւ ոչ լրիվ (անցումային դիմադրության միջոցով, որն առաջացել է ոչ կիսպ հպակից, ածխացած մեկուսիչից, թաղանթի օքսիդացումից եւ այլն): Կարճ միացման ժամանակ տեղի ունեցող ֆի- զիկական երեւոյթների խորը վերլուծությունը վկայում է, որ հենց դիմադրության մեծությունն է (էլեկտրահաղորդագծերի միակցման գո- տում) որոշիչ ազդեցություն ունենում ոչ միայն կարճ միացման բնույթի (կարճ միացման հո- սանքի մեծությունը եւ դրա տեւողությունը), այ- լե էլեկտրահաղորդագծերի մեկուսիչների բռնկման մեխանիզմի վրա:

Գերծանրաբեռնվածությունը վթարային ռե- ժիմի տեսակ է, որն առաջանում է էլեկտրական սպառիչի ոչ ճիշտ ընտրությամբ, միացման կամ վնասվելու հետեւանքով, ինչի արդյունքում մալուխով անցնող գունարային հոսանքը գե- րազանցում է դրա նոմինալ (նվազագույն) մե- ծությունը:

Հիմնական սկզբունքային հատկանիշը, որով պետք է կարճ միացումը տարբերել գեր-

ծանրաբեռնվածությունից, վթարային ռեժիմի ընթացքում մեկուսացման խանգարման (վնասման) պահն է: Կարճ միացման դեպքում մեկուսացման վնասումը հանդիսանում է վթա- րային ռեժիմի պատճառ, իսկ գերծանրաբեռն- վածության դեպքում՝ դրա հնարավոր հետեւ- անք:

Գերծանրաբեռնվածության ժամանակ էլեկտրահաղորդագծերի հրդեհավտանգավո- րությունը կախված է մի շարք գործոններից (ինչպես եւ կարճ միացման դեպքում), մասնա- վորապես գերծանրաբեռնվածության հոսան- քի բազմապատկիչությունից, տեղադրման (անցկացման) միջոցից, պաշտպանության ընտրությունից եւ այլն:

Գերծանրաբեռնվածության ռեժիմի տար- բերությունը կարճ միացումից (հրդեհավտան- գավորության տեսանկյունից) հանդիսանում է շիկացած մետաղական մասնիկների զգալիոր- րեն ավելի քիչ առաջացումը (քան կարճ միաց- ման ժամանակ): Մյուս բոլոր դեպքերում գեր- ծանրաբեռնվածությունը ոչ պակաս հրդեհավ- տանգ է, քան կարճ միացումը:

**Էլեկտրատեսուության անսարքություն- ներից առաջացած հրդեհներից խուսափե- լու համար անհրաժեշտ է պահպանել էլեկտրատեխնիկական եւ հակահրդեհային մի շարք կանոններ, մասնավորապես.**

- էլեկտրացանցը պետք է մոնտաժեն միայն մասնագետները՝ համաձայն էլեկտրատեխնի- կական եւ հակահրդեհային նորմերի եւ կանոն- ների,
- արգելվում է ժամանակավոր էլեկտրահա- ղորդագծերի անցկացումը, ինչպես նաեւ հա- ղորդալարերը մեխերով ամրացնելը,
- հաղորդալարերի միացումները պետք է կատարել տաք զոդման միջոցով կամ հատուկ սեղմիչների օգնությամբ, իսկ լարերի բաց տե- ղերը փաթաթել մեկուսիչ ժապավենով,

• էլեկտրական ցանցի ճյուղավորումներն անհրաժեշտ է կատարել պատերի խոռչնե- րում տեղադրված փոխանցման չայրվող տու- փերում, որոնք ծածկվում են կափարիչներով,

• էլեկտրական ցանցը պետք է ապահով- ված լինի գործարանային ապահովիչներով, որոնք հաշվիչի հետ միասին ամրացվում են չայրվող նյութից պատրաստված տակդիրի վրա, տեղադրվում պատի խոռոչում եւ ծածկ- վում չայրվող կափարիչով,

• խստորեն արգելվում է ինքնաշեն ապա- հովիչների, այսպես կոչված «խծուծալարերի» օգտագործումը,

• արգելվում է ինքնաշեն էլեկտրական սպառիչների օգտագործումը,

• չի թույլատրվում էլեկտրական ցանցին միացնել նորմայից շատ էլեկտրասպառիչներ,

• էլեկտրասպառիչների՝ էլեկտրական ցան- ցին միացումներն անհրաժեշտ է կատարել մի- այն վարդակների, եղանիկների եւ հատուկ ծայրապանակների օգնությամբ,

• էլեկտրական տաքացման սարքերը պետք է տեղադրել չայրվող հիմքի վրա, իրե- ից եւ առարկաներից առնվազն մեկ մետր հե- ռավորության վրա եւ այլն:

Հարգելի քաղաքացիներ, մեկ անգամ եւս հիշեցնում ենք, որ էլեկտրականությամբ աշ- խատող ամեն տեսակի սարքավորումների ոչ ճիշտ օգտագործումը, դրանց հետ անփույթ, անպատասխանատու վարվելն ու հրդեհային անվտանգության կանոնների ամենաանձան խախտումն անգամ բավական են, որ կորց- նեք նյութական արժեքներ, պատճառ դառ- նաք մարդկանց խեղանդամության կամ մահ- վան:

**Սերգեյ Հայրապետյան**  
**ՀՀ ԱԻՆ ՊՅՏ ՀՀԿՀՔ**  
**բաժնի պետ**



## Խուճապ, վախ, անհանգստություն

**Մ** Գաճախ ենք հանդիպում մարդկանց, որոնք ցանկացած մանրուքից խուճապի են մատնվում, կարծես նրանց ուղեղը դադարում է գործել այդ ժամանակ, նրանք կորցնում են ինքնատիրապետումն ու ինքնավերահսկողությունը: Որո՞նք են այն պատճառները, որ մարդուն նման անելանելի դրության մեջ են գցում: Շատ հոգեբաններ վկայում են, որ դրա հիմքում ընկած է վախը: Մարդն իրեն անապահով ու անօգնական է զգում եւ կարծում է, որ չի կարողանա կարգավորել իրավիճակը:

### Վառ երեւակայություն

Շատերի մեջ այդ պահին երեւակայության զուգորդումներն այնքան հեռու են գնում, որ կտրվում են իրականությունից. «Նրանք բոլորը կհասկանան, որ ես չկարողացա հանձնարարությունը կատարել, ինձ կհեռացնեն աշխատանքից, ես չեմ կարողանա վճարել բնակարանի վարձը...» եւ այլն: Այս ամենի հետեւանքով նրանք հեռանում են բուն իրավիճակից, առաջանում է անպետքության զգացողություն: Նրանք ավելի շատ մտատանջվում են, քե այս ամենն ինչ հետեւանքներ կունենան, փոխանակ իրենց վերահսկելու եւ կենտրոնանան հարցի լուծման վրա:

### Սեփական հնարավորությունների թերազնահատում

Անպաշտպանվածության զգացողություն ունենում են այն մարդիկ, ովքեր թերահավատորեն են մոտենում իրենց հնարավորություններին: Երբ զգում են, որ իրավիճակը դուրս է գալիս վերահսկողությունից, եւ չեն հասցնում դրան հարմարվել, ապա սկսում են անհանգստանալ եւ խուճապի մատնվել: Հոգեբանները բացատրում են, որ այս խնդիրը գալիս է վաղ մանկությունից, երբ երեխայի եւ մոր միջեւ եղած հոգեբանական կապը վերջնականապես չի կտրվում: Այսինքն, երբ երեխան գիտակցում է, որ ինքն առանձին էակ է, սակայն իրեն ոչ մի կերպ իր մայրիկից առանձին չի ընկալում: 3 տարեկանի ճգնաժամը. սա այն տարիքն է, երբ երեխայի մեջ ձեւավորվում է սեփական ես-ի գիտակցումը՝ ինքնագիտակցությունը: Երբ մայրիկը չափազանց հոգածություն է ցուցաբերում երեխայի նկատմամբ, ամեն ինչ անում է նրա փոխարեն, ապա արդյունքում երեխան չի կարողանում իրեն պատկերացնել առանց նրա: Մայրիկի նման մոտեցումը իրականում անգիտակցականորեն է լիցնում: Իսկ այս ամենի հետեւանքով երե-

խայի մեջ ձեւավորում է անօգնականություն, մեղքի զգացում եւ անթխածություն: Նա միշտ ունենում է որեւէ մեկի կարիքը, ով նրան ցույց կտա, թե ինչպես վարվել տվյալ իրավիճակում: Խուճապի ժամանակ նրանք դիմում են այն մարդկանց օգնությանը, ում վստահում են: Այդ իրավիճակում ցանկալի է ոչ թե խորհուրդներ տալ նրանց, այլ օգնել, աջակցել: Երբ դիմացինն օգնում է եւ հասկանում, ապա մարդը հանգստանում է, միտքը լուսավորվում է, քանի որ տեսնում է, որ խնդրի հետ միայնակ չէ:

### Ինչ անել

#### Վերադարձեք իրականության



Կարելի է ճիշտ գնահատել իրավիճակը: Դրա համար անհրաժեշտ է գիտակցել, թե ո՞րն է ձեր իրական նպատակը, թե ի՞նչ է ձեզ իրականում անհրաժեշտ անել, թե ո՞ր հանձնարարությունն առաջին հերթին իրականացնել, ո՞րն է հաջորդ քայլը եւ այլն: Այս հարցերի պատասխանները տալուց հետո դուք այլ կերպ կգնահատեք իրավիճակը:

#### Ձեզ սխալվելու հնարավորություն տվեք

Սեզանից յուրաքանչյուրն իր կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ սայթաքել է եւ իրեն վնասել: Այսինքն՝ մենք բոլորս էլ կենդանի էակներ ենք եւ կարող ենք սխալվել կյանքի յուրաքանչյուր ոլորտում: Հիշեք այս ամենը եւ մի՛ տանջեք ձեզ՝ կատարյալ լինել բոլոր հարցերում հնարավոր չէ:

#### Օգնության դիմեք

Կյանքում բազմիցս հանդիպում ենք այնպիսի խնդիրների, որոնց լուծումը մենք չենք կարող եւ պարտավորել էլ չենք միայնակ գտնել: Եթե դուք տեսնում եք, որ չեք կարողանում հարցին լուծում տալ, ապա դիմեք օգնության:

ԱՆՆԱ Կարապետյան  
հոգեբան-խորհրդատու

## Տարերային աղետներ. ինչպե՞ս վերականգնվել սթրեսից հետո

**Աղետներն այսօր ամենուրեք են: Դրանք կարող են լինել բնական, ինչպես, օրինակ, երկրաշարժերը, ջրհեղեղները, անտառային հրդեհները, փոթորիկները կամ տոռնադոները, եւ մարդու գործունեության հետեւանք՝ ինչպես դժբախտ պատահարներն աշխատավայրում կամ հրդեհները բնակարաններում, կամ էլ՝ օրինակ, ահաբեկությունները:**

Աղետներ վերապրածներին օգնող հոգեկան առողջության մասնագետների դիտարկումները ցույց են տվել, որ հետեւյալ քայլերն օգնում են նվազեցնել սթրեսային ախտանշանները եւ նպաստում են հետադարձության արագ վերականգնմանը:

- **Պաշտպանություն.** գտնել այնպիսի մի ապաստան, որտեղ կլինի սնունդ եւ ջուր, սանիտարահիգիենիկ պայմաններ, մեկուսանալու հնարավորություն, երբ կարելի է հանգիստ նստել, թուլանալ կամ քնել:
- **Նպատակ.** սկսել աշխատել անձնական կամ ընտանեկան առաջնահերթ խնդիրների լուծման ուղղությամբ, ինչը կօգնի ձեզ



ու ձեր սիրելիներին պահպանել կամ վերագտնել հույսը, ձգտումները կամ ինքնահարգանքը:

- **Հարաբերություններ.** հաստատել կամ վերահաստատել կապերն ընտանիքի, հասակակիցների եւ բարեկամների հետ՝ աղետի ենթարկվելու ձեր փորձի մասին խոսելու համար: Փրկվածները միշտ ուզում են հնարավորություն ունենալ՝ «պատմելու իրենց պատմությունները» նրանց, որոնք հետաքրքրված են եւ անհանգստանում են, ինչպես նաեւ կարողանան լսել ուրիշներին, երբ նրանք պատմում են իրենց մասին: Դա օգնում է, թեկուզ կարճ ժամանակով, թեթեւացնել սթրեսը:
- **Ընտրություն.** որոշել հիմնական ռեսուրսները, ինչպիսիք են Արտակարգ իրավիճակների մախարարությունը, Կարմիր խաչը եւ այլն, տեղի բժշկական հաստատությունը՝ արտակարգ իրա-

վիճակներում նախնական օգնություն, առողջապահական ծառայություններ եւ ընդհանուր աջակցություն ստանալու համար:

**Ամեն օրը նոր հնարավորություն է տալիս դեպի առողջացում եւ մեկ քայլ անելու համար: Աղետի ենթարկված մարդիկ պետք է.**

- Կենտրոնանան նրա վրա, ինչն ամենակարեւորն է իրենց եւ իրենց ընտանիքի համար տվյալ պահին:
- Փորձեն հասկանալ, թե ինչ է տեղի ունենում իրենց եւ իրենց սիրելիների հետ, որը կօգնի հիշել, թե ինչն է կարելի:
- Հասկանալ, թե ինչ է նշանակում այդ փորձը՝ որպես իրենց կյանքի մի մաս, որպեսզի կարողանան շարունակել ապրել եւ նույնիսկ՝ աճել որպես անհատ:
- Հոգալ սեփական մարմնի մասին՝ պարբերաբար մարզվել, լավ սնվել եւ քնել, որը կօգնի նվազեցնել սթրեսն ու կանխել հիվանդությունները:
- Աշխատել մյուսների հետ՝ համայնքում պայմանները բարելավելու համար, օգնել նրանց, ովքեր մեկուսացել են:
- **Ինչպե՞ս հասկանալ, որ մասնագիտական օգնության կարիք ունեք:**

Աղետներից փրկվածներից շատերն, այդ փորձի շնորհիվ, ավելի են ուժեղանում՝ նրանց հոգեկան հնարավորություններն աճում են: Այնուամենայնիվ, ոմանք հայտնվում են այնպիսի մի հոգեվիճակում, որն անհանգստացնում է իրենց: Դա լինում է հատկապես այն դեպքերում, երբ աղետի մեղավորը մեկ այլ մարդ է եղել:

**Կարող են հանդիպել հետեւյալ հիվանդագին ռեակցիաները.**

- Դեպքի կաշուն հիշողություններ (մղձավանջներ, տեսողական զուգորդումներ)
- Անհանգստացնող հիշողություններից ազատվելու անառողջ փորձեր (թմրանյութերի, ալկոհոլի օգտագործում)
- Չզգացմունքների լրիվ ընդարմացում (զգացմունքներ ունենալու անկարողություն, դատարկության զգացողություն)
- Շարունակական գերզգուցվածություն
- Ուժեղ տագնապ (կաթվածահար անող անհանգստություն, անօգնականություն)
- Դեպրեսիա (էներգիայի, հետաքրքրության, ինքնագնահատականի կորուստ)
- Կյանքի իմաստի ու հույսի կորուստ
- Երկարատեւ գայրույթ կամ կատաղություն
- Դիսոցիացիա (անիրականության կամ երազի մեջ գտնվելու զգացում, հիշողության կորուստներ):

Եթե աղետից որոշ ժամանակ անց այս նորմալ համարվող ռեակցիաները դանդաղորեն չեն անցնում, այլ գնալով խորանում են, ապա այս դեպքում արդեն մասնագիտացված օգնություն է պետք: Նրանք, ովքեր ուզում են վերջնականապես ազատվել այս ախտանշաններից, պետք է դիմեն մասնագետի, որն աշխատում է տրավմաների եւ աղետների ենթարկված մարդկանց հետ:

## «Կյանքի քառորդի» ճգնաժամ

Կյանքի այս փուլն ընդունված է համարել նոր ձեռքբերումների եւ հնարավորությունների շրջան, քանի դեռ մարդը չի ընկնում վեւ անունական կյանքի եւ հիպոթեթիկային վարկերի մեջ: Սակայն, հաղթահարելով աշխատանքի կամ նրա բացակայության, պարտքերի եւ անձնական կյանքի հետ կապված հուզմունքները, շատ երիտասարդ մարդիկ, բրիտանացի հոգեբանների խոսքերով, ապրում են «կյանքի քառորդի» ճգնաժամ:

«Այդ ֆենոմենը, որն իր մեջ կրում է միջին տարիքի ճգնաժամի բոլոր նախանշանները եւ ձեւավորում է միայնակության, հիասթափության, չպաշտպանվածության եւ դեպրեսիայի զգացում, սպառնում է մարդուն «հասուն» կյանք մտնելիս: Այդ թվում՝ առավել հաճախ դա հանդիպում է կրթված մասնագետների շրջանում», - նշում է հոդվածի հեղինակ Ամելի Չիլլը:

«Կյանքի քառորդի» ճգնաժամ տեղի է ունենում ոչ թե այն ժամանակ, երբ մարդն ապրել է իր կյանքի 1/4 մասը, այլ այն ժամանակ, երբ մարդն ապրում է իր «հասուն» տարիքի 1/4 մասը, այն է՝ 25 տարեկանից մինչեւ 35 տարեկան», - բացատրում է Լոնդոնի Գրինվիչի համալսարանի փորձագետ, ուսումնասիրության ղեկավար Օլիվեր Ռոբինսոնը:

Ուսումնասիրությանը կցվել են նաեւ Gumtree.com կայքի կատարած հարցման արդյունքները, ըստ որի՝ 1100 հարցված երիտասարդ մարդկանց 86 տոկոսն ընդունել է, որ մինչեւ 30 տարեկան անձնական կյանքում եւ աշխատանքում հաջողություններ ունենալու անհրաժեշտությունը ճնշում է իրենց:

Ռոբինսոնը նաեւ նշում է, որ «կյանքի քառորդի» ճգնաժամը, որը տեսնում է միջին հաշվով 2 տարի, կարող է դրական փորձ հանդիսանալ: Այն կարելի է բաժանել փուլերի՝ փակուղում հայտնվելու զգացումից մինչ փոփոխության շարժառիթ եւ, վերջապես, նոր կյանքի կառուցման փուլ:

Ուսումնասիրության արդյունքները կհետաքրքրեն այն մարդկանց, ովքեր գտնվում են անցման շրջանում, նշենք, որ այս ճգնաժամը հաճախ ուղեկցում է «հասուն» կյանքի սկզբին եւ բերում է դրական փոփոխությունների:



## Ամազոնի անտառահատումների փարածքը վերջին փարում երկու անգամ ավելացել է

### Երաժշտությանը զբաղվելը փրկում է ծերությունից

«Երիտասարդ մնալու համար պետք է սովորել որևէ երաժշտական գործիք նվագել», - փաստում են գիտնականները:

Նրանք պարզել են, որ 45-65 տարեկան երաժիշտները հրաշալի հիշողություն ունեն են ընդունակ են ավելի լավ ընկալել խոսքն աղմուկի ժամանակ, քան այն մարդիկ, ովքեր չեն նվագում:

Հյուսիս-արևմտյան ինստիտուտի լսողական մյարդաբանության լաբորատորիայի ղեկավար Նինա Կրաուսը բացատրում է.

«Տեսական երաժշտական պարապմունքներն ունեն առավելություններ, որոնք նկատելի են դառնում տարիքի հետ. խոսքը հիշողության վատացման եւ աղմուկի ժամանակ խոսքի ընկալման մասին է»:

Այնուամենայնիվ, լսողության որակն ինքնին չի անդրադառնում խոսքի ընկալման ունակության վրա: Օրինակ, նույն կերպ լսող մարդիկ կարող են տարբեր կերպ հաղթահարել խնդիրը:



Երեւույթի պատճառով պարզելու համար ուսումնասիրողները հարցում են կատարել 18 երաժիշտների եւ 19 սովորական մարդկանց շրջանում: Ստուգելով աղմուկի ժամանակ նրանց խոսքի ընկալումը, ուսումնասիրվել է օպերատիվ լսողական հիշողությունը, օպերատիվ հիշողությունը եւ ժամանակավոր լսողական ինֆորմացիայի վերամշակումը:

Երաժիշտները, ովքեր սկսել են նվագել 9 տարեկանից կամ ավելի վաղ հասակից եւ պարապել են ամբողջ կյանքի ընթացքում, ավելի տպավորիչ արդյունքներ են ցուցադրել՝ ի տարբերություն հասարակ մարդկանց: Բայց օպերատիվ հիշողության դեպքում արդյունքներն անեմելին էլ պարզ չեն, երկու խմբի մարդիկ էլ նույն արդյունքներն են ցույց տվել:

Ի վերջո, ուսումնասիրողները եկել են այն եզրահանգման, որ երաժիշտները մարզում են սեփական երաժշտական գործիքի ծայրը տարբերելու ունակությունը, ռիթմը: Դրա շնորհիվ նրանց մյարդային համակարգը կարգավորվում է եւ ծերության ընթացքում նրանք հաղորդակցվելու քիչ դժվարությունների են հանդիպում:

### Հայտնաբերվել են Ջոկոնդայի «Ենթադրյալ» մասունքները

Իտալացի հնագետները, Ֆլորենցիայում գտնվող սբ. Ուրսուլայի նախկին կուսանոցի տարածքում պեղումների երկրորդ օրը, հայտնաբերել են գետնաշառքառան: Գիտնականների հավաստմամբ՝ այստեղ թաղված է եղել Լիզա Ջերարդինի ղեկ Ջոկոնդան, որը պատկերված է Լեոնարդո դա Վինչիի լեգենդար նկարում: Գիտնականները հայտնաբերել են ժամանակի ընթացքում քայքայված երկու դագաղ եւ վստահեցրել, որ Լիզայի մասունքները գտնվում են դրանցից մեկում:

Իտալիայի պատմական եւ մշակութային արժեքների պաշտպանության ազգային կոմիտեն հետազոտում է գտնված մասունքները: Պեղումների աշխատանքների սկզբում հայտնաբերվել են ոսկորներ, որոնք, ըստ էության, կենդանիների ոսկորներ են: Պեղումներին մասնակցում են ութ մարդ, աշխատանքները կարող են տևել 15-ից 30 օր: Այն, որ Լիզա Ջերարդինին, որը մահացել է 1542 թվականին՝ 63 տարեկանում, թաղված է այստեղ, վկայում են միանձնուկների կողմից կազմված ավելի վաղ հայտնաբերված փաստաթղթերը:

Ուսումնասիրողները ծրագրում են հայտնաբերել կնոջ մասունքները, որպեսզի հետազայուն ոսկորներից վերցված ԴՆԹ-ի արդյունքները համեմատեն նրա երեխաների ԴՆԹ-ի՝ արդեն իսկ գոյություն ունեցող արդյունքների հետ:

Փորձագետները կարծում են, որ իրենց ենթադրությունները, կապված հանրահայտ ֆլորենսիացի կնոջ գերեզմանի գտնվելու վայրի հետ, կհաստատվեն:

Հաջողության դեպքում նրանք հույս ունեն գտնված գանգից վերստեղծել Լիզա Ջերարդինի դեմքը, որպեսզի վերջ դնեն տարածայնություններին՝ ո՞վ է, ի վերջո, եղել Լեոնարդո դա Վինչիի նկարի բնորոշիչը:

Համաձայն իմնական տարբերակի՝ «Մոնա Լիզա» համարվում է հանրաճանաչ ֆլորենտացի Լիզա Ջերարդինի ղեկ Ջոկոնդան:

Հետազոտող Կառլա Գլորին կարծում է, որ «Ջոկոնդան» իրականում Միլանի դքսի՝ Բիանկա Սֆորցի, աղջիկն է: Մեկ այլ հետազոտող՝ Միլվանո Վինչետին ենթադրել է, որ Լեոնարդոյի գլուխգործոցը կնոջ կերպար չէ,

այլ տղամարդու: Համաձայն այդ ենթադրության՝ նկարում պատկերված է Ջան Ջակոմո Կապրատին, որը 1490-ից 1510 թվականներին աշխատել է գեղանկարչի արվեստանոցում եւ իր անթիվ արքայների համար վաստակել է «Սատանայի ճուտ» մականունը: Բացի այդ, առաջ են քաշվել վարկածներ, ըստ որոնց Ջոկոնդան դա Վինչիի ինքնանկարն է:



Իտալացի հետազոտողները հայտարարել էին իրենց մտադրության մասին՝ պեղել Լիզա Գերարդինի ղեկ Ջոկոնդայի ենթադրյալ մասունքներն ապրիլ ամսվա սկզբին: Ապրիլի 27-ին սկսված աշխատանքների առաջին փուլում ուսումնասիրողները, գերեզմանոցի հայտնաբերման նպատակով, գեոռադարի օգնությամբ, երեք օրվա ընթացքում հետազոտել են նախկինում սբ. Ուրսուլայի կուսանոցի տարածքը:

### Հայտարարություն

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1. Պետական հրդեհային տեսչության Շիրակի մարզային հրդեհային տեսչության տեսչական բաժնի գլխավոր մասնագետ-տեսուչ (ծածկագիր՝ 34-3.1-25)

Մրցույթը կանցկացվի 2011թ հուլիսի 14-ին՝ ժամը 10-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում՝ Դավիթաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող. 109/8 հասցեում:

2. Պետական հրդեհային տեսչության Շիրակի մարզային հրդեհային տեսչության տեսչական բաժնի գլխավոր մասնագետ-տեսուչ (ծածկագիր՝ 34-3.1-26)

Մրցույթը կանցկացվի 2011 թ. հուլիսի 15-ին՝ ժամը 10-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում՝ Դավիթաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող. 109/8 հասցեում:

Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստուգումներ եւ հետազոտություններ հրդեհային կազմակերպություններում, հիմնարկներում, բնակելի շենքերում եւ առանձնատներում, ինչպես նաեւ հսկողություն պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների կողմից հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջ-

ության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ, իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան հրդեհների վերաբերող գործերով հետաքննություն, տալիս են բնակավայրերի, շենքերի եւ շինությունների նախագծման, կառուցման եւ շահագործման, հիմնանորոգման ու վերակառուցման ժամանակ հրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջների կիրառման մասին եզրակացություններ, մասնակցում են շենքերն ու շինությունները շահագործման ընդունող հանձնաժողովներին աշխատանքներին, կիրառում են վարչական պատասխանատվության միջոցներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

3. Պետական հրդեհային տեսչության Շիրակի մարզային հրդեհային տեսչության տեսչական բաժնի առաջատար մասնագետ-տեսուչ (ծածկագիր՝ 34-3.3-33):

Մրցույթը կանցկացվի 2011 թ. հուլիսի 20-ին՝ ժամը 10-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում՝ Դավիթաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող. 109/8 հասցեում: Մասնակցում է պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց ու քաղաքացիների կողմից հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջ-

ների կատարման նկատմամբ հսկողության իրականացման, ինչպես նաեւ բնակավայրերի, շենքերի եւ շինությունների նախագծման, կառուցման եւ շահագործման, հիմնանորոգման ու վերակառուցման ժամանակ հրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջների կիրառման մասին եզրակացություններ տալու աշխատանքներին, մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստուգումներին եւ հրդեհային հետազոտությունների իրականացման աշխատանքներին՝ կազմակերպություններում, հիմնարկներում, բնակելի շենքերում եւ առանձնատներում, մասնակցում է բնակավայրերում եւ օբյեկտներում հրդեհային անվտանգության ու պահպանության կազմակերպմանը վերաբերող հարցերի քննարկմանը:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կանցկացվի 2011 թ. հուլիսի 1-ին՝ ժամը 10-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում՝ Դավիթաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող. 109/8 հասցեում: Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն
- քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետու-

թյան համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդակցականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

• սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

• համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

• անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1,2):

Դիմող ՀՀ քաղաքացիները նախարարության աշխատակազմ (ք. Երեւան, Դավիթաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող. 109/8) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ծեղ լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- նշված թափուր պաշտոնն զբա-

ղեցնելու համար՝ մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացառությամբ դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

• արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գրքույկային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք:

• մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի. • անձնագրի պատճենը: ՀՀ քաղաքացի մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 09.30-ից մինչեւ 12.30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2011 թ. հունիսի 10-ը:

Մրցույթին մասնակցելի ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին եւ հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն (ք. Երեւան, Դավիթաշեն 4 թաղամաս, Ա. Միկոյան փող. 109/8, հեռ. 36-15-62):

